«Ա. Դ. Սախարովի անվան
մարդու իրավունքների պաշտպանության
հայկական կենտրոն» ՀԿ
Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԻՄ-ԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

ԶԵԿՈՒՅՑ

2014թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Մոնիտորինգի իրավական հիմքերի վերլուծություն	4
Մոնիտորինգի նպատակը և խնդիրները	6
Մոնիտորինգի առարկան, տեղեկատվության աղբյուրները, իրականացման մեթոդոլոգիան, փուլերը	7
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում մարզի համայնքների ավագանու որոշումների մատչելիությունը	8
Մարզի համայնքապետարանների պաշտոնական կայքերում ՏԻՄ-երի իրավական ակտերի մատչելիությունը	24
ՀՀ Գեղարքունիքի մարզի՝ համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ) ունեցող համայնքային կայքերում ՏԻՄ-երի իրավական ակտերի մատչելիությունը	26
ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների 2013թ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների տեղադրման ուսումնասիրության արդյունքները	30
Ամփոփում	31
Առաջարկություններ	33
Հավելված 1: Մոնիտորինգի իրավական հիմքերը	35

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Համայնքը պետական համակարգի ժողովրդավարական հիմքն է»: Հետևապես տեղական ինքնակառավարումն անհնարին է պատկերացնել առանց ժողովրդավարական միջավայրի, քաղաքացիական ներգրավվածության և տեղական ինքնակառավարման ոլորտի դերակատարների ժողովրդավարական գործելակերպի:

Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կողմից թափանցիկության, հրապարակայնության և բնակչությանը հաշվետու լինելու մասին պահանջները ամրագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, սակայն հաշվետու լինելը դեռևս չի դարձել ՏԻՄ-երի գործունեության սկզբունքային, անբաժանելի և առաջնային բաղադրատարրը:

Ցավոք, ընդհանուր ուրվագծերն այսպիսին են: Համայնքապետերի կողմից միանձնյա կառավարում, համայնքային մասնակցությունից մեկուսացած համայնքապետարաններ, փակ գործելակերպ, ավագանու նիստերի մասին իրազեկության պահանջի համատարած չպահպանում: Իհարկե, կան նաև օրենսդրության պահանջները պահպանող և իրականացնող համայնքապետարաններ, որոնք սակավաթիվ են: Տեղական ինքնակառավարման ոլորտում առկա խնդիրներն ու թերացումները համակարգային են և պահանջում են համակարգային լուծումներ: Տեղական նշանակության խնդիրներն էլ իրենց հերթին էլ ավելի են խորացնում համակարգային խնդիրները:

ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովման կարևոր նախապայման է ՏԻՄ-երի կողմից օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունների և իրավական ակտերի հրապարակումը ինտերնետում, ինչն օրեցօր ավելի արդիական ու պահանջված է դառնում: ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովման կարևորությունը և արդիականությունն անխզելիորեն կապված են մարդու իրավունքների և ազատությունների իրացման, մարդկանց իրական կյանքի և ամենօրյա պահանջմունքների բավարարման հետ:

Ինտերնետային տեղեկատվության և հատկապես պաշտոնական կայքերի ստեղծման և գործարկման միջոցով ՏԻՄ-երը կարող են համայնքային և առավել լայն հանրությանը իրազեկել իրենց գործունեության մասին և հնարավորություն տալ համայնքների անդամներին մասնակցելու համայնքի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներին: Համայնքային պաշտոնական կայքերը պետք է հնարավորություն ընձեռեն ժամանակին և առավելագույն տեղեկություններ ստանալու ՏԻՄ-երի գործունեության մասին, ապահովեն օրենսդրությամբ պահանջվող իրավական ակտերի հրապարակումը: Հետևապես ՏԻՄ-երի գործունեության և մասնավորապես իրավական ակտերի մատչելիության ապահովումը շարունակաբար կատարելագործման կարիք ունի:

Ելնելով վերոհիշյալից՝ մեր կողմից իրականացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի 92 ՏԻՄ-երի իրավական ակտերի ինտերնետային թափանցիկության և մատչելիության մոնիտորինգ՝ նպատակ ունենալով վերհանել այս ոլորտում ՏԻՄ-երին առնչվող խնդիրները: Դիտարկվել են ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կայքը (gegharkunik.gov.am), մարզի համայնքների առկա պաշտոնական կայքերը, Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ) ունեցող համայնքների կայքերը (www.infosys.am) և ՀՀ հրապարակային ծանուցումների (www.azdarar.am) կայքը, նրանցում ՏԻՄ իրավական ակտերի տեղադրման գործընթացը:

Մոնիտորինգի արդյունքում ներկայացվում են առաջարկություններ՝ ուշադրություն հրավիրելով առկա խնդիրների և դրանց լուծման ուղիների վրա:

Զեկույցը հասցեագրված է տարածքային կառավարման մարմիններին, թիրախ համայնքների ՏԻՄ ներկայացուցիչներին, քաղաքացիական հասարակության կառույցներին:

Չենք բացառում, որ զեկույցում կարող են լինել որոշ բացթողումներ և անճշտություններ, հետևապես երախտապարտ կլինենք ցանկացած գրավոր արձագանք ստանալու և ճշտումներ կատարելու հնարավորության համար:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի անդամների առջև ՏԻՄ-երի հաշվետու լինելը, ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը տեղական ինքնակառավարման սկզբունքներից են: Այս սկզբունքների կենսագործման համար արդիական և արդյունավետ գործիք կարող են հանդիսանալ համայնքային պաշտոնական ինտերնետային կայքերը, որոնց միջոցով ՏԻՄ-երի գործունեությունը մատչելի կդառնա հանրության համար:

Վերջին տասնամյակի ընթացքում գնալով կարևորվում է տեղեկատվական տեխնոլոգիների ներդրումը տեղական ինքնակառավարման համակարգում, սակայն մինչ այժմ ՏԻՄ-երը իրենց հայեցողությամբ են ստեղծում և վարում ինտերնետային կայքեր: Մեր օրենսդրությունը չի պարտադրում տեղական ինքնակառավարման մարմիններին ունենալ պաշտոնական համացանցային կայքեր: ՀՀ կառավարությունը 2014թ. մարտի 19-ին № 11 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգին», որով առաջարկվում է զարգացնել տեղեկատվայնացման ոլորտին առնչվող օրենսդրական դաշտը, մշակել ՏԻՄ–երի գործունեության տեղեկատվայնացման խթանմանն ուղղված համապատասխան օրենքներ և այլ իրավական ակտեր, սակայն չի առաջարկվում պարտադիր դարձնել համայնքային պաշտոնական կայքերի ստեղծումը:

Մինչդեռ ինտերնետային կայքերի առկայության դեպքում ՏԻՄ-երը պետք է ապահովեն օրենսդրորեն սահմանված պահանջների կիրարկումը, որոնք ներկայացնում ենք ստորև:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված է, որ ավագանու հերթական նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ հրապարակված տեղեկությունը և օրակարգի նախագիծը հնարավորության դեպքում լրացուցիչ կերպով կարող է տարածվել զանգվածային լրատվության միջոցներով և ինտերնետային ցանցի միջոցով: 19.06.2013թ. օրենքում կատարվել են մի շարք լրացումներ, որոնք միտված են տեղական ինքնակառավարման որոշումների կայացման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցության մակարդակի բարձրացմանը: Նույն օրենքի 10.1.-րդ հոդվածին համապատասխան համայնքի ավագանու որոշմամբ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի սահմանմամբ հնարավորություն է ընձեռվում առավել ակտիվորեն, կանոնակարգված մասնակցելու իրենց կյանքին, կենցաղին և ամբողջությամբ համայնքին վերաբերող որոշումների կայացման գործընթացին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված է, որ 7-րդ հոդվածի «2-րդ և 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով»: Փաստորեն, եթե ՏԻՄ-երն ունեն ինտերնետային էջ, ապա սույն օրենքով նախատեսված տեղեկությունների հրապարակումը օրենսդրական պարտադիր պահանջ է:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջով՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը ենթակա են պարտադիր պաշտոնական հրապարակման»: Նույն օրենքով նաև սահմանված է. «Իրավական ակտերի պաշտոնական կամ ոչ պաշտոնական հրատարակումն իրականացվում է այդ իրավական ակտերը կամ դրանց քաղվածքները թղթի վրա, էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա տպագրման կամ բազմացման, ինչպես նաև էլեկտրոնային կամ այլ ցանցերով դրանց տարածման միջոցով»:

ՀՀ կառավարության 25.03.2010թ. № 296 -Ն որոշմամբ հաստատվել է «Նորմատիվ իրավական ակտերի նախագծի հանրային քննարկումների կազմակերպման և

* Տե՛ս իրավական հիմքերը «Հավելված № 1»-ում (էջ 35):

իրականացման կարգ», որի համաձայն ևս նախագիծ մշակող մարմինը իր ինտերնետային կայքում պետք է հրապարակի «նորմատիվ իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև նախագիծ մշակող մարմնի հայեցողությամբ այլ նյութեր», ինտերնետային կայքում պետք է հրապարակի հանրային քննարկումների հրավեր, «հանրային քննարկումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք ինտերնետային կայքում հրապարակված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնվել ինտերնետային կայքում հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկվել համապատասխան էլեկտրոնային հասցեով», ինչպես նաև «հանրային քննարկումների ավարտից հետո 15-օրյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված ամփոփաթերթը և նախագծի լրամշակված տարբերակը […] պետք է տեղադրվի նախագիծ մշակող մարմնի ինտերնետային կայքում»: Փաստորեն, ինտերնետային կայքի առկայության պարագայում ՏԻՄ-երը պետք է ապահովեն վերոհիշյալ որոշման պահանջների կատարումը:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 20.12.2011թ. № 07-Ն հրամանով հաստատվել են «ՀՀ մարզպետների կատարած աշխատանքների գնահատման չափորոշիչներ», որոնք ներառում են նաև ՀՀ մարզպետների կատարած աշխատանքների գնահատման չափորոշիչներ մարզպետարանի կայքում տեղադրված համայնքների ավագանիների տվյալ ժամանակահատվածի ընդունած որոշումների քանակների հետ կապված: Այս չափորոշիչներերից ելնելով՝ ՀՀ մարզպետարանների կայքերում համայնքների ավագանիների որոշումների տեղադրումը պարտադիր պահանջ է:

Համայնքի անդամների առջև ՏԻՄ-երի հաշվետու լինելու, ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության և թափանցիկության ևս մեկ օրենսդրական պահանջ ամրագրված է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն

«Համայնքների բյուջեների հրապարակայնությունն ապահովելու համար՝

գ) համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում»:

2013թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» № 1521-Ն որոշումը, որով հաստատվել են ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները: Ընդունված որոշմամբ տեղական ինքնակառավարման և պետական այլ մարմիններին առաջարկվել է իրենց պաշտոնական կայքերը համապատասխանեցնել այդ որոշման պահանջներին: Որոշումն ուժի մեջ է մտնելու 2014 թվականի հուլիսի 1-ից: Հետևապես, մարզպետարանների և համայնքային պաշտոնական կայքերում տեղեկությունների տեղադրումը հետայդու պետք է համապատասխանեցվի որոշմամբ սահմանված նվազագույն պահանջներին:

Այսպիսով, ՏԻՄ-երի գործունեության արդյունավետությունն ու որակը բարձրացնելու, համայնքի անդամների առջև հաշվետու լինելու, համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու էական նախադրյալներից է ՏԻՄ-երում պաշտոնական ինտերնետային կայքերի պարտադիր ստեղծումը և դրանց պատշաճ գործարկումը:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակները

- Նպաստել ՀՀ Գեղարքունիքի մարզի ՏԻՄ-երի կողմից ինտերնետում օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունների և իրավական ակտերի հրապարակման գործընթացին:
- Նպաստել ՀՀ Գեղարքունիքի մարզի ՏԻՄ-երի հրապարակայնության, թափանցիկության բարձրացմանը և համայնքի անդամների առջև հաշվետվողականության ապահովմանը:

Խնդիրները

- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում համայնքների ավագանիների ընդունած որոշումների տեղադրման ուսումնասիրություն:
- ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքապետարանների ինտերնետային պաշտոնական կայքերի առկայության և նրանցում օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունների և իրավական ակտերի տեղադրման գործընթացի ուսումնասիրություն:
- ՀՀ Գեղարքունիքի մարզի ՏԻՄ-երի կողմից համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո սահմանված ժամկետում ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակման ուսումնասիրություն:
- ՀՀ Գեղարքունիքի մարզի ՏԻՄ-երի կողմից ինտերնետում իրավական ակտերի ինտերնետային մատչելիությունն ապահովող գործընթացը բարելավելու առաջարկությունների պատրաստում:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՌԱՐԿԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Մոնիտորինգի առարկան

ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի, ՀՀ հրապարակային ծանուցումների և Գեղարքունիքի մարզի համայնքների պաշտոնական կայքերում մարզի ՏԻՄ-երի կողմից ընդունած իրավական ակտերի մատչելիության ուսումնասիրություն:

Մոնիտորինգի տեղեկատվության աղբյուրները

- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի gegharkunik.gov.am պաշտոնական կայք
- ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական կայք
- Գեղարքունիքի մարզի համայնքների կայքեր՝
  - ✓ Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ) ունեցող համայնքներ (www.infosys.am կայք)
  - ✓ Համայնքապետարանների պաշտոնական կայքեր
  - ✓ ՏԻՄ ներկայացուցիչներ

Մոնիտորինգի իրականացման մեթոդոլոգիան և փուլերը

Մոնիտորինգի հարցաշարերի, տվյալների մուտքագրման ձևաթերթերի և այլ նյութերի մշակում	Հունիս – օգոստոս, 2013
Մոնիտորինգային խմբի կազմում*	Հուլիս - օգոստոս, 2013
Ինտերնետային կայքերի ուսումնասիրում և ձեռք բերված տվյալների փաստաթղթավորում	Սեպտեմբեր, 2013 - ապրիլ 2014
Հարցումների իրականացում առնվազն 7 համայնքներում	Սեպտեմբեր 2013 – փետրվար, 2014
Մոնիտորինգի իրականացում և տվյալների մուտքագրում	Սեպտեմբեր, 2013 – ապրիլ, 2014
Մոնիտորինգի զեկույցի կազմում	Մարտ – ապրիլ, 2014
Մոնիտորինգի արդյունքների հանրային քննարկում	Մայիս, 2014
Գրավոր հարցումների կազմում	Ըստ անհրաժեշտության

* Մոնիտորինգային խմբում ներգրավվել և աշխատել են կազմակերպության կամավորներ Լիանա Մակվեցյանը, Արմինե Սաղաթելյանը և Վեներա Առաքելյանը:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքն է՝ http://gegharkunik.gov.am/: Այն ընդգրկված է «Տարածքային կառավարման համակարգ» (ՏԿՀ) միասնական ցանցում, պատրաստվել է 2011թ.-ին:

Մարզպետարանի կայքում առկա «Համայնքներ» բաժնում ներառված են հետևյալ ենթաբաժինները:

- Համայնքի մասին
- Համայնքի ղեկավար և ավագանի
- Համայնքի ղեկավարի որոշումներ
- Համայնքի ավագանու որոշումներ
- Համայնքային բյուջետային եկամուտներ
- Համայնքային բյուջետային ծախսեր
- Հաշվետվություններ
- Վարչական հսկողություն
- Տեղեկատվություն հաստիքների վերաբերյալ

Մեր կողմից մարզպետարանի պաշտոնական կայքում համայնքի ավագանու որոշումների տեղադրման ուսումնասիրությունը բխում է օրենսդրական ներքոշարադրյալ պահանջներից:

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան՝ համայնքի աշխատակազմի քարտուղարն ապահովում է ավագանու որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում:
- ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման կարգը, Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչները, ինչպես նաև դրանց հիման վրա ձևավորվող գնահատականների միավորները հաստատելու մասին» № 562-Ն որոշմամբ սահմանվել են մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման հիմնական և լրացուցիչ չափորոշիչներով: Համայնքի ավագանու ընդունած որոշումների նկատմամբ մարզպետի իրականացրած հսկողությունը հիմնական չափորոշիչներից է:
- ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 20.12.2011թ. № 07-Ն հրամանով հաստատվել են «ՀՀ մարզպետների կատարած աշխատանքների գնահատման չափորոշիչներ», որոնք ներառում են մարզպետարանի կայքում տեղադրված բոլոր համայնքների ավագանիների տվյալ ժամանակահատվածի ընդունած որոշումների գնահատման միավորներ: Այս իրավական ակտով որոշակի պարտավորություններ են դրվում մարզպետների վրա՝ ապահովելու համայնքների ավագանիների որոշումների տեղադրումը մարզպետարանների պաշտոնական կայքերում:
- Համաձայն 21.05.2009 թ. № 562-Ն վերոհիշյալ որոշման՝ «գնահատվող աշխատանքները գնահատվում են տարեկան մեկ անգամ», հետևապես մեր կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում 2011-2014թթ. ընթացքում մարզի 92 համայնքների ավագանու որոշումների տեղադրման գործընթացը ուսումնասիրվել է տարեկան կտրվածքով:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մարզպետարանի կայքում համայնքների ավագանու որոշումները հիմնականում տեղադրված են ըստ նիստերի հերթականության, հիմնականում առկա են մարզպետին հղված գրություններ, որոնցում նշված են ավագանու նիստերի կայացման օրերը, որոշումների համարները և առդիր ներկայացվող թերթերի քանակը:

Նախ ներկայացնենք մարզպետարանի կայքում առ 30.04.2014թ. դրությամբ քաղաքային, ապա գյուղական համայնքների ավագանիների կողմից ընդունած որոշումների տեղադրման գործընթացի վիճակը:

Քաղաքային համայնքներ

Գավառ

2011 թվականին տեղադրված են համայնքի ավագանու թվով 13 որոշումներ (22, 32-43 համարակալմամբ): Կայքում տեղադրված են մարզպետին հղված 2 գրություններ, որոնցով առդիր ներկայացված որոշումները տեղադրված չեն:

2012 թվականին տեղադրված են համայնքի ավագանու թվով 53 որոշումներ: Տեղադրված չեն 1, 2, 5, 6, 7 համարակալմամբ որոշումները: Տեղադրված ավագանու վերջին թվակիր որոշումը 26.12.2012թ. «Գավառ համայնքի ավագանու կանոնակարգի հաստատման մասին» թիվ 58-Ն որոշումն է, որի հավելված 1-ը, այն է՝ ավագանու կանոնակարգը, տեղադրված չէ:

2013 թվականին տեղադրված են համայնքի ավագանու ընդհանուր թվով 51 որոշումներ: Տեղադրված ավագանու վերջին թվակիր որոշումը 61-րդն է, սակայն առկա են 61 համարակալմամբ 2 տարբեր որոշումներ: Տեղադրված չեն ավագանու 39-49 համարակալմամբ որոշումները:

- Տեղադրված է 06.05.2013թ. «Գավառ համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 25-Ն որոշումը, սակայն ծրագիրը տեղադրված չէ:
- Համայնքի ավագանու 01.07.2013թ. թիվ 37-Ա որոշմամբ հաստատված Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը (հավելված 1) տեղադրված չէ:
- Տեղադրված է 09.09.2013թ. մարզպետին հղված Մ-539 թվակիր գրությունը ավագանու թիվ 4 նիստի որոշումները ներկայացնելու մասին, սակայն որոշումները տեղադրված չեն:
- Տեղադրված չեն Գավառի համայնքի ավագանու 5-րդ նիստին ընդունված որոշումները:

2014 թվականի ապրիլի 29-ին տեղադրված են 14.03.2014թ. ավագանու 2-րդ նիստի 10-23 համարակալմամբ որոշումները, իսկ 1-ին նիստի որոշումները տեղադրված չեն: Առկա է «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» 14.03.2014թ. թիվ 16 որոշումը:

Ճամբարակ

2011 թվականին տեղադրված են ավագանու 4-6-րդ նիստերի ընդհանուր թվով 8 որոշումները: Թեև առկա է մարզպետին 07.06.2011թ. հղված № 427 գրությունը, սակայն գրությամբ նշված 9-13 համարակալմամբ որոշումները տեղադրված չեն:

2012 թվականին տեղադրված են ավագանու 1-3-րդ և 5-րդ նիստերի ընդհանուր թվով 23 որոշումները: Փաստորեն, առնվազն 2 նիստերի որոշումներ չեն տեղադրվել, մինչդեռ «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանու 06.12.2012թ. թիվ 18-Ն որոշմամբ հաստատված «Ճամբարակ քաղաքային համայնքի ավագանու կանոնակարգը» և թիվ 19-Ն որոշմամբ հաստատված «Ճամբարակ քաղաքային համայնքի 2013-

2016թթ. քառամյա սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը» տեղադրված չեն: Վերջինս տեղադրվել է կայքում 14.10.2013թ.-ին, առկա է նաև համապատասխան գրություն:

2013 թվականին տեղադրված են ավագանու 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ նիստերի ընդհանուր թվով 14 որոշումներ: «Համայնքի 2013 թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշումը տեղադրված է ոչ ամբողջական՝ սկսած 8-րդ կետից: Տեղադրված չեն ավագանու 3 նիստերի՝ 3-րդ, 6-րդ և 7-րդ նիստերի որոշումները: Ավագանու թիվ 5 նիստը հրավիրվել է արտահերթ՝ 16.07.2013թ.-ին, որից կարելի է եզրակացնել, որ մինչև տարեվերջ պետք է հրավիրված լիներ ավագանու առնվազն ևս 2 նիստ, հետևապես կայքում հետայդու պետք է տեղադրված լինեին առնվազն ավագանու 2 նիստերի որոշումներ:

2014 թվականին տեղադրված են ավագանու 17.01.2014թ. 1-ին և 17.03.2014թ. 2-րդ նիստերի թվով 12 որոշումները: Ամբողջությամբ տեղադրվել է համայնքի 2013թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, 2014թ.-ի հաստատված բյուջեն, 17.03.2014թ. թիվ 08-Ն որոշմամբ հաստատված «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»:

Մարտունի

2011 թվականին տեղադրված են միայն ավագանու 8-10-րդ նիստերին ընդունված ավագանու 86-122 համարակալմամբ 37 որոշումները: Առկա է 25.05.2011թ. մարզպետին հղված № 836 գրությունը ավագանու 18.05.2011թ. 4-րդ նիստի որոշումները ուղարկելու մասին, սակայն որոշումները տեղադրված չեն: Կայքում տեղադրված է ավագանու 22.06.2011թ. 5-րդ նիստի օրակարգը, սակայն ավագանու որոշումները տեղադրված չեն:

2012 թվականին տեղադրված են ավագանու 1-ին, 3-րդ, 7-10-րդ նիստերի ընդհանուր թվով 74 որոշումներ: Տեղադրված չեն 2-րդ, 5-րդ և 6-րդ նիստերի որոշումները: 4-րդ նիստին ընդունված ավագանու 29-54-րդ որոշումները տեղադրված են Գեղարքունիքի մարզի Մարտունի գյուղական համայնքի համապատասխան բաժնում, ինչը վրիպում է:

2013 թվականին տեղադրված են ավագանու 1-10-րդ նիստերի 1-83 և 123-135 համարակալմամբ որոշումները, բացառությամբ ավագանու թիվ 7 նիստի որոշումների:

2014 թվականին տեղադրվել են համայնքի ավագանու 06.02.2014թ. 1-ին նիստի 1-14 և 24.03.2014թ. արտահերթ նիստի 15-31 համարակալմամբ որոշումները: Տեղադրվել են «Համայնքի 2013թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման մասին» որոշմանը կից տեղեկատվությունները 2013թ. բյուջեի մուտքերի և ծախսերի վերաբերյալ:

Սևան

2011 թվականին տեղադրված են ավագանու 3-5-րդ նիստերի 22-48 համարակալմամբ որոշումները, իսկ 1-21 համարակալմամբ որոշումները բացակայում են: Առկա է մարզպետին 03.06.2011թ. հղված գրությունը Սևան քաղաքի ավագանու՝ 23.05.2011թ. թիվ 2 նիստի որոշումները (առդիր՝ 42 թերթ) ուղարկելու մասին, սակայն որոշումները կայքում տեղադրված չեն:

2012 թվականին տեղադրված են ավագանու նիստերի 36-59 համարակալմամբ որոշումները՝ սկսած 4-րդ նիստից: 15.03.12թ. կայքի կողմից ընդունված ավագանու թիվ 1 նիստի 1-Ն, 2-Ն և 3-Ն որոշումները չեն բեռնվում: Մարզպետին 21.01.2013թ. հղված գրությամբ նշված է, որ ուղարկվում են 25.12.12թ. թիվ 5 և 17.01.2013թ. թիվ 1 նիստի որոշումները, սակայն թիվ 1 նիստի որոշումները տեղադրված չեն: Առդիր տեղադրված է 30 էջ՝ գրության մեջ նշված 32 էջի փոխարեն:

2013 թվականին տեղադրված են ավագանու 2-7-րդ նիստերի՝ ավագանու 2-58 համարակալմամբ որոշումները, չեն տեղադրվել ավագանու 1, 50 և 51 համարակալմամբ որոշումները: Տեղադրված է 03.04.2013թ. ավագանու թիվ 2 նիստի թիվ 8-Ա որոշումը համայնքի

2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին, սակայն ծրագիրը տեղադրված չէ:

2014 թվականին տեղադրվել են 18.02.2014թ. 1-ին նիստի 1-9 համարակալմամբ ավագանու որոշումները: Տեղադրված է համայնքի 2013թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման մասին թիվ 1-Ն որոշումը 3 հավելվածներով՝ «Համայնքի 2013թ. տարեկան բյուջեի եկամուտների կատարման և համեմատական վերլուծության ցուցանիշները», «Համայնքի 2013թ. տարեկան բյուջեի ծախսերի կատարման և համեմատական վերլուծության ցուցանիշները», «Համայնքում առաջացած պարտքերի շարժը, կառուցվածքը, մարումը 01.01.2013-01.01.2014թ. դրությամբ»: Տեղադրված է նաև «Քաղաքապետարանի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 5-Ա որոշումը՝ կից հավելվածով: Կայքում տեղադրված չեն 2-րդ նիստի ընթացքում ընդունված որոշումները:

Վարդենիս

2011 թվականին տեղադրված են ավագանու 7-րդ և 8-րդ նիստերի ավագանու 46-57-րդ և հաջորդ նիստերի ընթացքում ընդունված 69-70, 77-81, 97-122 համարակալմամբ որոշումները: Տեղադրված է 20.04.2011թ. մարզպետին հղված № 289 գրությունը ավագանու 14.04.2011թ. 6-րդ նիստի 27-45 համարակալմամբ որոշումները և հավելվածները ներկայացնելու մասին (առդիր 56 թերթ), սակայն որոշումները և հավելվածները տեղադրված չեն: Տեղադրված է մարզպետին հղված 27.06.11թ. գրությունը թիվ 9 նիստի 58-70 համարակալմամբ որոշումները ներկայացնելու մասին (առդիր 26 թերթ), սակայն տեղադրված են ընդամենը 2 որոշումներ: Տեղադրված է մարզպետին հղված № 515 գրությունը 14.07.11թ. թիվ 10 նիստի 71-76 համարակալմամբ որոշումները և հավելվածները ներկայացնելու մասին (առդիր 25 թերթ), սակայն դրանք ևս տեղադրված չեն: Տեղադրված է մարզպետին հղված 20.09.2011թ. № 694 գրությունը 15.09.2011թ. թիվ 12 նիստի 82-96 համարակալմամբ որոշումները և հավելվածները ներկայացնելու մասին (առդիր 27 թերթ), սակայն որոշումները և հավելվածները տեղադրված չեն:

2012 թվականին տեղադրված են ավագանու բոլոր նիստերի որոշումները:

2013 թվականին տեղադրվել են ավագանու բոլոր նիստերի որոշումները, սակայն չի տեղադրվել 15.01.2013թ. №3-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագիրը:

2014 թվականին տեղադրվել են համայնքի ավագանու 1-5-րդ նիստերի ընդհանուր թվով 37 որոշումները: Չեն տեղադրվել միայն 4-րդ նիստին ընդունված 2 որոշումներ: Տեղադրված են «Վարդենիս քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման մասին» 17.02.2014թ. թիվ 5-Ն, «Վարդենիս քաղաքային համայնքի 2014թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշումները և «Վարդենիս քաղաքային համայնքի 2014թ. բյուջեն հաստատելու մասին» 14.04.2014թ. վերահաստատված որոշումը՝ բոլոր կից հավելվածներով:

Գյուղական համայնքներ

Նախ ներկայացնենք 2011-2014թթ. ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում գյուղական համայնքների ավագանու որոշումների քանակը՝ 30.04.2014թ. դրությամբ (տե՛ս աղյուսակ № 1): Քանակական տվյալներն իսկ հնարավորություն են տալիս տեսնել ընդհանուր իրավիճակը:

Աղյուսակ № 1

№	Համայնքը	2011	2012	2013	2014
1.	Ազատ	5	2	1	1
2.	Ախպրաձոր	5	2	4	0
3.	Ակունք	1	2	2	0
4.	Այգուտ	5	1	2	0
5.	Այրք	1	2	4	0
6.	Անտառամեջ	7	2	6	0
7.	Աստղաձոր	7	17	31	0
8.	Ավազան	9	10	5	3
9.	Արեգունի	1	0	2	0
10.	Արծվանիստ	34	41	20	0
11.	Արտանիշ	4	6	6	0
12.	Արփունք	1	3	3	0
13.	Բերդկունք	5	6	6	0
14.	Գանձակ	31	39	33	11
15.	Գեղամաբակ	2	3	4	0
16.	Գեղամասար	2	7	1	0
17.	Գեղամավան	1	5	5	4
18.	Գեղարքունիք	14	14	34	10
19.	Գեղաքար	1	2	4	1
20.	Գեղհովիտ	2	0	22	0
21.	Գետիկ	6	2	0	3
22.	Դարանակ	0	0	1	0
23.	Դդմաշեն	7	22	14	0
24.	Դպրաբակ	3	9	19	0
25.	Դրախտիկ	15	13	0	0
26.	Երանոս	21	25	41	15
27.	Զոլաքար	2	0	0	0
28.	Զովաբեր	25	44	35	12
29.	Թթուջուր	2	16	11	0
30.	Լանջաղբյուր	1	1	2	0
31.	Լիճք	3	1	6	0
32.	Լճաշեն	31	46	43	0
33.	Լճավան	0	3	13	3
34.	Լճափ	16	15	14	0
35.	Լուսակունք	1	6	31	3
36.	Խաչաղբյուր	3	3	11	0
37.	Ծակքար	20	36	34	11
38.	Ծաղկաշեն	8	11	18	14
39.	Ծաղկունք	7	16	19	0
40.	Ծափաթաղ	1	1	1	0
41.	Ծովագյուղ	8	18	0	0
42.	Ծովազարդ	5	13	15	0
43.	Ծովակ	28	19	17	6

№	Համայնքը	2011	2012	2013	2014
44.	Ծովասար	23	7	11	0
45.	Ծովինար	1	12	0	0
46.	Կալավան	6	6	14	0
47.	Կախակն	8	3	3	0
48.	Կարճաղբյուր	13	13	39	0
49.	Կարմիրգյուղ	9	18	26	5
50.	Կութ	7	9	4	3
51.	Կուտական	11	6	2	0
52.	Հայրավանք	6	1	6	0
53.	Զորագյուղ	3	4	13	5
54.	Զորավանք	15	9	0	0
55.	Մ. Մասրիկ	5	6	6	0
56.	Մադինա	10	2	22	6
57.	գ. Մարտունի	13	4	4	0
58.	Մաքենիս	0	8	4	2
59.	Ն. Գետաշեն	5	8	11	0
60.	Ն. Շորժա	1	3	2	0
61.	Նորաբակ	1	3	1	0
62.	Նորակերտ	1	5	0	2
63.	Նորաշեն	0	15	5	12
64.	Նորատուս	11	18	14	0
65.	Շատջրեք	4	8	4	1
66.	Շատվան	1	4	0	0
67.	Շորժա	12	5	7	0
68.	Չկալովկա	12	19	6	9
69.	Ջաղացաձոր	1	1	5	0
70.	Ջիլ	5	11	4	0
71.	Սարուխան	20	6	11	0
72.	Սեմյոնովկա	5	11	12	3
73.	Սոթք	1	18	0	0
74.	Վ. Գետաշեն	1	0	16	0
75.	Վ. Շորժա	0	1	5	0
76.	Վահան	0	4	14	7
77.	Վաղաշեն	10	31	55	11
78.	Վանևան	5	7	2	0
79.	Վարդաձոր	21	19	38	3
80.	Վարդենիկ	13	20	15	0
81.	Վարսեր	42	50	36	9
82.	Տորֆավան	5	5	6	0
83.	Տրետուք	0	0	20	0
84.	Փ. Մասրիկ	3	8	7	0
85.	Փամբակ	1	1	1	0

Մեծ թվով գյուղական համայնքների ավագանու որոշումներ տեղադրված են ոչ բավարար քանակությամբ, երբեմն էլ՝ շատ սակավ, իսկ բովանդակային առումով հաճախ չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին:

Ամենավատ արդյունքներն ունեն 14 համայնքներ՝ Ակունք, Աղբերք, Արեգունի, Արծվաշեն, Դարանակ, Զոլաքար, Լանջաղբյուր, Ծափաթաղ, Կախակն, Նորաբակ, Շատվան, Ջաղացաձոր, Տրետուք, Փամբակ:

- **Աղբերք և Արծվաշեն** համայնքների ավագանիների որոշումները ընդհանրապես տեղադրված չեն:
- **Դարանակ**: Տեղադրվել է համայնքի ավագանու արտահերթ նիստի միայն մեկ՝ 18.12.13թ. թիվ 8 արձանագրային որոշումը համայնքի 2014թ. բյուջեի հաստատման մասին:
- **Ակունք**: 2011թ. տեղադրվել է համայնքի միայն 27.12.2011թ. «Ակունք համայնքի 2012թ. բյուջեի հաստատման մասին» թիվ 13 որոշումը, որում առկա չեն բյուջեի եկամուտների և ծախսերի վերաբերյալ թվային տվյալներ: 2012 և 2013թթ. ընթացքում տեղադրվել են համայնքի ավագանու ընդամենը երկուական որոշումներ:
- **Արեգունի**: 2011թ. տեղադրվել է համայնքի ավագանու միայն 15.12.2011թ. թիվ 7 որոշումը «Արեգունի համայնքի 2012թ. բյուջեի հաստատման մասին», որում բացակայում են եկամուտների և ծախսերի վերաբերյալ թվային տվյալներ: 2013թ. տեղադրվել են ավագանու 2 որոշումներ, որոնցից մեկը վերը նշված 15.12.2011թ. թիվ 7 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին է, իսկ մյուսը գյուղապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին է:
- **Զոլաքար**: Տեղադրված են համայնքի ավագանու 2011թ. ընդամենը երկու որոշումներ:
- **Լանջաղբյուր**: 2011 և 2012 թվականներին տեղադրվել են համայնքի ավագանու մեկական, իսկ 2013թ. ընթացքում՝ 2 որոշումներ:
- **Ծափաթաղ**: 2011, 2012 և 2013 թվականներին տեղադրվել են համայնքի ավագանու մեկական որոշումներ:
- **Կախակն**: Այս համայնքի ավագանու որոշումների անբավարար քանակն առկա վիճակի մի կողմն է: Սակայն առավել մտահոգիչ է իրավական ակտերի բովանդակության անհամապատասխանությունն օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Այսպես, 2011թ. ընթացքում տեղադրվել են ավագանու 2-8 համարակալմամբ թվով 9 որոշումներ, ընդ որում՝ 7-րդ համարակալմամբ տեղադրված են 3 տարբեր վերնագրերով որոշումներ: 12.03.2011թ. թիվ 2 որոշմամբ հաստատվել են տարբեր հարաբերություններ կարգավորող իրավական ակտեր՝ համայնքի ավագանու կանոնակարգ և համայնքի 2011թ. բյուջեի մեջ փոփոխությունների կատարում, և ի լրումն՝ ավագանու կանոնակարգը և բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ թվային տվյալներ առկա չեն.


ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱԽԱԿՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ-2որոշում
12.03.2011թ
Համայնքի ավագանու կանոնակարգի հաստատման և համայնքի բյուջեի փոփոխության կատարելու մասին:
Ղեկավարվելով ՀՀ.«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի:

Համայնքի ավագանին որոշում է
1.Հաստատել Կախակն համայնքի ավագանու կանոնակարգը:
2.Հաստատել Կախակն համայնքի 2011թ. բյուջեյի մեջ փոփոխություն կատարելու:

Գ.Պետրոսյան
Վ.Հակոբյան

2012թ. ընթացքում տեղադրվել են Կախակն համայնքի ավագանու 2 որոշումներ, որոնք թվային տեղեկություններ չեն պարունակում.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Կախակն համայնքի ավագանու թիվ 2 որոշ
« 24 » « 01 » « 2012 »թ

Կախակն համայնքի 2012թ ճշգրտված բյուջեի հաստատում.

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով .

Ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ղեկավարի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը բարձր լեռնայինի հետ միասին:

:

Կախակն համայնքի ղեկավար՝ Գ. Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱԽԱԿՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Կախակն համայնքի ավագանու թիվ 3 որոշում
« 24 » « 02 » « 2012 »թ

Բյուջեի նախահաշվի մեջ փոփոխություն

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի հոդված ....4.2.3.5..... մասով հաստատել բյուջեի նախահաշվի մեջ կատարվող փոփոխությունները:

Ավագանին որոշում է՝

1. Հաստատել բյուջեի նախահաշվի մեջ կատարվող փոփոխությունները:

Կախակն համայնքի ղեկավար՝ Գ. Պետրոսյան

2013թ. տեղադրվել են Կախակն համայնքի ավագանու 5 որոշումներ, որոնք իրենց բովանդակային առումով չեն «զիջում» համայնքի ավագանու կողմից նախորդ տարիներին ընդունած որոշումներին: Այսպես, «Կախակն համայնքի բյուջեի կատարողականի մասին» 02.05.2013թ. թիվ 2 որոշմամբ ավագանին որոշել է. «Մոբիլիզացնել գյուղապետարանի աշխատողների ուժերը ավագանու անդամների հետ հարկերի և վարձավճարների գանձման աշխատանքներում»: 02.09.2013թ. թիվ 5 որոշմամբ, որն, ի դեպ վերնագիր չունի, ավագանին որոշել է. «105,0 հա հողի համար վարձակալության մրցույթ հայտարարել»՝ առանց նշելու հողի նպատակային նշանակությունը, հողատեսքը, մրցույթի հայտարարման ընթացքը:

- **Նորաբակ**: 2011թ. և 2013թ. տեղադրվել են համայնքի ավագանու մեկական որոշումներ, իսկ 2012թ. ընթացքում՝ 3 որոշումներ:
- **Շատվան:** 2011թ. տեղադրվել է համայնքի ավագանու մեկ որոշում: 2012թ.-ին տեղադրվել են 10.12.2012թ.-ին ընդունված 12-15 համարակալմամբ 4 որոշումներ, որոնք մարզպետարանի կայքում տեղադրվել են 04.09.2013թ., այսինքն՝ մոտ 9 ամիս անց:
- **Ջաղացաձոր**: 2011- 2012թթ. ընթացքում տեղադրվել են համայնքի ավագանու մեկական որոշումներ, իսկ 2013թ. ընթացքում տեղադրվել են 2-6-րդ նիստերի արձանագրությունները՝ ընդհանուր թվով 6 որոշումներ:
- **Տրետուք:** Կայքում առկա են համայնքի ավագանու 2012թ. 1-7-րդ նիստերի 1-20 համարակալմամբ որոշումները, որոնք մարզպետարան են ներկայացվել միանգամից՝ 25.11.2013թ.-ին:
- **Փամբակ:** 2011, 2012 և 2013 թվականների ընթացքում տեղադրվել են համայնքի ավագանու մեկական որոշումներ: 11.01.2012թ. թիվ 1 որոշումը չունի վերնագիր, ներածական մաս: Որոշմամբ միայն նշված է. «Հաստատել Փամբակ համայնքի 2012թ. վարչական բյուջեն ըստ ներկայացված մուտքային և ծախսային մասերի», առկա չեն թվային տվյալներ:

Զգալի թիվ են կազմում նաև այն գյուղական համայնքները, որոնց ավագանու որոշումները 2011-2013թթ. տարեկան կտրվածքով և 2014թ. չորս ամիսների ժամանակահատվածում մարզպետարանի պաշտոնական կայքում ամբողջովին չեն տեղադրվել: Այսպես՝

- **2011թ.** ընթացքում կայքում տեղադրված չեն Դարանակ, Լճավան, Մաքենիս, Վ. Շորժա, Վահան, Տրետուք գյուղական համայնքների ավագանիների որոշումները,
- **2012թ**. ընթացքում՝ Արեգունի, Գեղհովիտ, Դարանակ, Զոլաքար, Կախակն, Վ. Գետաշեն, Տրետուք գյուղական համայնքների ավագանիների որոշումները,
- **2013թ**. ընթացքում՝ Գետիկ, Դրախտիկ, Զոլաքար, Ծովագյուղ, Ծովինար, Ձորավանք, Նորակերտ, Շատվան, Սոթք համայնքների ավագանիների որոշումները,
- **2014թ**. հունվար-ապրիլ ամիսների ընթացքում՝ մարզի 87 գյուղական համայնքներից կայքում չեն տեղադրվել 57 համայնքների ավագանու որոշումներ (տե՛ս աղյուսակ № 1):

Հազվադեպ են այն դեպքերը, երբ այս կամ այն գյուղական համայնքի ավագանու որոշումները 2011թ.-ից ի վեր տարեկան կտրվածքով տեղադրված են ամբողջությամբ: Կան համայնքներ, որոնց տվյալ տարվա որոշումները մարզպետարանի կողմից ընդունվել և տեղադրվել են արդեն հաջորդ տարում: Սակայն, անկախ էական բացթողումներից և առավել մեղմ թերացումներից, ընդհանուր առմամբ՝ **2011-2013թթ. ընթացքում նկատելի է դրական տեղաշարժ՝ կապված ավագանու որոշումների տեղադրված քանակի առնչությամբ**.

Տարին	Տեղադրված որոշումների ընդհանուր քանակը
2011	662
2012	873
2013	991

Հաշվի առնելով այս դինամիկան՝ կարող ենք ենթադրել, որ 2014թ. ընթացքում ավագանու որոշումները պետք է տեղադրվեին ամբողջությամբ, սակայն այս տարվա առաջին 4 ամսվա տվյալները այդ մասին չեն վկայում: 2014թ. հունվար-ապրիլ ամիսների ընթացքում կայքում տեղադրված են 28 գյուղական համայնքների ընդանուր թվով 175 ավագանու որոշումներ: Առավել ամբողջական են տեղադրվել Գեղարքունիք, Ծակքար, Ծաղկաշեն, Կարմիրգյուղ, Նորաշեն, Վահան, Վաղաշեն համայնքների ավագանիների որոշումները, սակայն առկա են թերացումներ՝ կապված որոշումներին կցված հավելվածների տեղադրման հետ:

Զգալի թիվ են կազմում այն դեպքերը, երբ տեղադրված են Գեղարքունիքի մարզպետին ուղղված գրություններ համայնքի ավագանու որոշումները ներկայացնելու մասին, սակայն գրություններում հիշատակված որոշումները տեղադրված չեն, ինչպես, օրինակ՝

- տեղադրված է 19.06.2012թ. **Արծվանիստ** համայնքի ավագանու թիվ 4 նիստի 23-28-րդ որոշումները մարզպետին ուղարկելու մասին 05.07.2012թ. № ԱԳԵ-2ժ գրությունը, սակայն որոշումները տեղադրված չեն.
- տեղադրված են 18.06.2013թ. մարզպետին հասցեագրված գրությամբ ուղարկված **Սարուխան** համայնքի ավագանու 1-16-րդ որոշումների քաղվածքները, սակայն տեղադրված չեն 2, 3, 7 և 9 համարակալմամբ որոշումների քաղվածքները.
- տեղադրված է **Դդմաշենի** համայնքի ղեկավարի՝ մարզպետին հասցեագրված 28.12.2011թ. ԳՊ/№ 025/Ե-122/11 գրությունը, ըստ որի՝ ներկայացվել են ավագանու 2011թ. 10-րդ նիստի 22-30 համարակալմամբ որոշումները, սակայն տեղադրված է միայն թիվ 22 որոշումը համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին, որին կցված ավագանու կանոնակարգը տեղադրված չէ:

Հաճախ հանդիպող բացթողում է համայնքների ավագանու որոշումներում տարաբնույթ հավելվածների և հատկապես ստորև նշված հավելվածների բացակայությունը՝

- **համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագիր** (օրինակ՝ չեն տեղադրել Գանձակ, Լճավան, Լճաշեն, Ծովազարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Մաքենիս, Նորակերտ, Վաղաշեն, Փոքր Մասրիկ համայնքները),
- **ավագանու կանոնակարգ** (օրինակ՝ չեն տեղադրել Գանձակ, Լուսակունք, Ծովակ, Լճափ, Զովաբեր, Դդմաշեն, Նորաբակ, Նորաշեն, Վաղաշեն համայնքները):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարված վերջին լրացումների հետ կապված՝ շատ քիչ թվով ՏԻՄ-եր են ընդունել տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության կարգ: Սակայն ավելի կարևոր է ընդունելուց հետո դրանց մատչելիության ապահովումը: Այսպես, Վարդենիս և Ճամբարակ համայնքները ընդունել են վերոհիշյալ կարգը, առկա են համապատասխան որոշումները և հավելվածները, մինչդեռ կան համայնքներ, որոնք մարզպետարան չեն առաքել կարգի ընդունման մասին որոշումները և դրանց կից հավելվածները կամ բավարարվել են միայն որոշումների առաքմամբ:

Հազվադեպ չեն այն իրողությունները, երբ համայնքների կողմից ներկայացվում են միանգամից մեկ և ավել ավագանու նիստերի ընթացքում ընդունված որոշումներ: Ներկայացնենք որոշ օրինակներ.

- մարզպետին հասցեագրված Լճափի գյուղապետի 04.06.2013թ. № 023 գրությամբ ներկայացվել են միանգամից 1-3-րդ նիստերի 1-6 համարակալմամբ որոշումները,
- Գեղամասար համայնքի ավագանու 1-6-րդ նիստերի ընդհանուր թվով 8 որոշումները մարզպետարան են ներկայացվել 25.12.2012թ.-ին, միանգամից,
- Տրետուք համայնքի ավագանու 2012թ. 1-7-րդ նիստերի 1-20 համարակալմամբ որոշումները մարզպետարան են ներկայացվել միանգամից՝ 25.11.2013թ.-ին,
- Կալավան համայնքի ավագանու 2013 թ.-ի 2-5-րդ նիստերի ընթացքում ընդունված 4-13 համարակալմամբ որոշումները ներկայացվել են միանգամից և կայքի կողմից ընդունվել են 09.12.2013թ.-ին:

Կայքում առկա են նաև տեղադրման տեխնիկական որոշ վրիպումներ, որոնք թեև շատ հազվադեպ են, սակայն արժանի են հիշատակման դրանց հետագա բացառման նպատակով: Օրինակ՝

- Լճաշեն համայնքի ավագանու 04.09.2013թ. թիվ 8 նիստի 41-43 համարակմամբ որոշումները տեղադրված են Լճափ համայնքի ավագանու որոշումների բաժնում,
- Մարտունի քաղաքի ավագանու կողմից 2012 թ.-ին ընդունված ավագանու 29-54-րդ որոշումները տեղադրված են Մարտունի գյուղական համայնքի համապատասխան բաժնում,
- Շորժա համայնքի 2011թ. թիվ 2 ավագանու նիստի 3-5 համարակալմամբ որոշումները տեղադրված են Վերին Շորժա համայնքի ավագանու որոշումներ բաժնում,
- ավագանու որոշումների հետ տեղադրված են համայնքի ղեկավարի որոշումներ (օրինակ՝ Ծովակ, Վարդաձոր, Կարմիրգյուղ), մինչդեռ այդ նպատակով մարզպետարանի կայքում կա առանձին ենթաբաժին,
- առկա են ավագանու որոշումների կրկնակի տեղադրման դեպքեր:

Հատուկ ուշադրության է արժանի նաև այն, որ շատ դեպքերում ավագանու որոշումները տեղադրված են քաղվածքների կամ արձանագրությունների տեսքով, մինչդեռ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված է ավագանու որոշումների և ոչ թե քաղվածքների և(կամ) արձանագրությունների առաքում համապատասխան մարզպետարան:

Ավագանու որոշումների մատչելիության ապահովման էական պայման է նաև ակտերի բովանդակությունը, ինչը ենթադրում է իրավական ակտերի կառուցվածքի, իրավական տեխնիկայի կանոնների պահպանում, անհրաժեշտ թվային, անհատական տվյալների ներառում:

Հարկ է նշել, որ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքում տեղադրված են մեթոդական ուղեցույցներ և օրինակելի ձևեր («Տեղական ինքնակառավարման համակարգ» բաժին), որոնց կիրառումը ՏԻՄ-երին հնարավորություն կտա ապահովել ՀՀ օրենսդրության պահանջների պատշաճ կատարումը: Մասնավորապես կայքում առկա է ՀՀ կառավարության 2011 թ. հոկտեմբերի 6-ի նիստի № 39 արձանագրային որոշման «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող փաստաթղթերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույց» հավելվածը և ՀՀ համայնքների ավագանիներին ուղղված մեթոդական նամակը: Սակայն ուսումնասիրության ընթացքում բազմաթիվ են օրինակները, որոնք փաստում են զգալի թվով ՏԻՄ-երի կողմից նշված ուղեցույցներից չօգտվելը:

Արդյունքում ՏԻՄ-երի կողմից ընդունած իրավական ակտերն իրենց կառուցվածքով, վերնագրերով և օրենսդրական տեխնիկայի այլ կանոններով հաճախ չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով ամրագրված պահանջներին:

Ներկայացնենք մի քանի օրինակներ.

- **Նորաբակ և Ներքին Շորժա** համայնքների ավագանիները նույն օրը՝ 04.12.2012թ.-ի նիստում, քննարկել են Գեղարքունիքի մարզխորհրդի 02.11.2012թ. թիվ 03 արձանագրությունը և ընդունել են որոշումներ: Երկու որոշումներն ունեն նույն բովանդակությունը. «Ի գիտություն ընդունել 02.11.2012թ. ՀՀ Գեղարքունիքի մարզխորհրդի թիվ 03 արձանագրությունը, բարձրացված հարցերը և հետևողական լինել նիստում բարձրացված հարցերի կատարման գործընթացների ապահովմանը»: Որոշումներում բացակայում է մարզխորհրդի նիստում բարձրացված հարցերի թվարկումը և չի սահմանվում, թե ինչպիսի՞ գործընթացների ապահովմանը պետք է հետևողական լինեն համայնքների ավագանիները (տե՛ս սույն որոշումները):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՇՈՐԺԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

04. 12. 2012թ

Ներքին Շորժայի գյուղապետարան

ՈՐՈՇՈՒՄ

Տեղի ունեցավ Ներքին Շորժա համայնքի ավագանու հերթական նիստ: Նիստին մասնակցում էին ավագանու 3 անդամներից 3-ը՝

1. Խ. Նաջարյան
2. Ա. Մուրադյան
3. Հ. Թովմասյան

Նիստին հրավիրված էր աշխատակազմից Կ. Ծիրանյանը, նիստը վարում էր գյուղապետ՝ Է. Մինասյանը, արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Վ. Մինասյանը:

Օրակարգ՝

Համայնքի բյուջեյի կատարման ընթացքը՝

Զեկուցող՝ Է. Մինասյան՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և 16-րդ հոդվածի դրույթներով,հիմք ընդունելով 02/11/2012թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի մարզխորհրդի նիստի թիվ 03 արձանագրությունը, 3-կողմ,0-դեմ, 0-ձեռնպահ ձայներով համայնքի ավագանին որոշեց:

Որոշում թիվ1

Ի գիտություն ընդունել 02/11/2012թ ՀՀ Գեղարքունիքի մարզի մարզխորհրդի նիստի թիվ-03 արձանագրությունը և հետևողական լինել նիստում բարձրացված հարցերի կատարման գործընթացների ապահովմանը:

Ավագանու անդամներ 1. Խ Նաջարյան

2. Ա. Մուրադյան

3. Հ. Թովմասյան

Իսկականի հետ ճիշտ է:

Ներքին Շորժա համայնքի ղեկավար՝ Է.Մինասյան

Արձանագրող՝ Վ.Մինասյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՆՈՐԱԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

04.12.2012թ. գ.Նորաբակ

22.11.2012 թվականի Գեղարքունիքի մարզխորհրդի թիվ 03 արձանագրության բարձրացված հարցերի քննումը

Ղեկավարվելով տեղական ինքնակառավարման մասին << օրենքի 32 հոդվածի և 16-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով 02.11.2012թ << Գեղարքունիքի մարզխորհրդի նիստի թիվ 03 արձանագրությունը, 3 կողմ ձայներով համայնքի ավագանին որոշում է.

Ի գիտություն ընդունել 02.11.2012թ << Գեղարքունիքի մարզխորհրդի նիստի թիվ 03 արձանագրությունը, բարձրացված հարցերը և հետևողական լինել նիստում բարձրացված հարցերի կատարման գործընթացների ապահովմանը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ավագանու անդամներ՝ Ասատուրյան Գարիկ
Մնացականյան Հրաչյա
Մարկոսյան Հայկազ

Իսկականի հետ ճիշտ է:

Նորաբակի համայնքի ղեկավար՝ Վ. Ասատուրյան

Արձանագրող՝ Հ. Պետրոսյան

- **Փամբակ** համայնքի ավագանու 11.02.2012թ. թիվ 1 որոշումը չունի վերնագիր, ներածական մաս, միայն նշված է. «Հաստատել Փամբակ համայնքի 2012թ. վարչական բյուջեն ըստ ներկայացված մուտքային և ծախսային մասերի»՝ առանց թվային տվյալների, առանց դասակարգման:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

N1

«11» «01» 2012թ. գ. Փամբակ

Հաստատել Փամբակ համայնքի 2012թ. վարչական բյուջեն ըստ ներկայացված մուտքային և ծախսային մասերի:

Համայնքի ղեկավար՝ Հ. Ազարյան

- **Կուտական** համայնքի ավագանու համապատասխան որոշման փոխարեն մարզպետարան է առաքվել 18.06.2012թ. թիվ 4 արձանագրությունը, որտեղ ուշագրավ է օրակարգի 2-րդ հարցը և դրա մասին ընդունված որոշումը::

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

18.06.2012թ. գ. Կուտական

2012թ. հունիսի 18-ին ժամը 11^{30}-ին տեղի ունեցավ ՀՀ Գեղարքունիքի մարզի Կուտական համայնքի ավագանու հերթական նիստը: Նիստին ներկա էին ավագանու անդամներ Բ. Մկրտչյան, Գ. Մկրտչյան, Ա. Եսայան, Ա. Մկրտչյան և գյուղապետարանի աշխատակազմը:

Նախագահությամբ՝ Ա. Մ. Աբրահամյան
Քարտուղարությամբ՝ Ս. Մկրտչյան

ՕՐԱԿԱՐԳ

1. Դպրոցին հատկացնել անապահով երեխաներին դասագրքերի վարձավճարների համար 31000 (երեսունմեկ հազար) դրամ զեկուցող՝ Ա. Մ. Աբրահամյան:
2. Շենք և շինությունների ամեն ամսյա փաստաթղթերի կազմում զեկուցող՝ Ա. Մ. Աբրահամյան:

ԼՍԵՑԻՆ -2 Զեկուզող՝ համայնքի ղեկավարը Ա. Աբրահամյանը ավագանու անդամներին ներկայացրեց, որ պետք է իրագործեն համայնքի սեփականություն հանարվող շենքերի, շինությունների ամեն ամսյա փաստաթղթերի նախապատրաստումն և կազմումը:
Որոշումը ընդունվեց միաձայն դեմ, ձեռնպահ չկան:

Նիստի նախագահ՝ Ա.Մ. Աբրահամյան
Արձանագրող՝ Ս.Ա. Մկրտչյան

Ավագանու անդամներ՝ Ե.Վ. Մկրտչյան
Գ.Ա. Մկրտչյան
Ա.Հ. Ենայան
Ս.Ա. Մկրտչյան
Հ.Խ. Սիմոնյան (բացականեր)

- **Փոքր Մասրիկ** համայնքի ավագանու 29.03.2013թ. № 2 նիստով ընդունվել է որոշում ամենամյա գույքագրման հանձնաժողով ստեղծելու մասին, սակայն որոշմամբ նշված չէ հանձնաժողովի անհատական կազմը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն Փոքր Մասրիկի Ավագանի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 մարտի 2013 թ. N2 նիստ

Հայաստանի Հանրապետության Փոքր Մասրիկ Համայնքի Գույքագրման Հանձնաժողով Ստեղծելու Մասին;

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին.. ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով Փ.Մասրիկ համայնքի ավագանին որոշում է.
ՈՐՈՇՈՒՄ 1 .
Ստեղծել հանձնաժողով Փոքր Մասրիկ համայնքի սեփականությունը ամենամյա գույքագրում կատարելու համար;

ԿՈՂՄ `4 ԴԵՄ/0/ ՁԵՌՆՊԱՀ/0/

1.Ասցատուրով Կամո
2.Դիվանյան Վաչագան
3.Ղևոնդյան Արտեմ
4.Սարգսյան Ավետիք

Փոքր Մասրիկի գյուղապետ՝

- **Նորատուս** համայնքի ավագանին 22.04.2014թ. թիվ 14 որոշմամբ որոշել է. «Քննարկել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից 2014թվականին իրականացրած վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունները և աշխատանք տանել դրանք շտկելու ուղղությամբ»: Որոշման մեջ առկա չեն տեղեկություններ վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների և դրանք շտկելու ուղղությամբ կատարվող աշխատամնքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՏՈՒՍԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս, (0264)62515, (0264)60030,
noratus.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2014թվականի N 14/Կողմ -8 , Դեմ -0/

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2014ԹՎԱԿԱՆԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքով

Համայնքի ավագանին

Ո ր ո շ ե ց

Քննարկել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից 2014թվականին իրականացրած վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունները և աշխատանք տանել դրանք շտկելու ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՈՒՐԱԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Աշխատակազմի քարտուղար՝ Կ.Հարությունյան

- **Սեմյոնովկա** համայնքի ավագանին 13.01.2014թ. «Սեմյոնովկա համայնքի 2013թ. բյուջեի կատարման հաշվետվության հաստատման մասին» թիվ 3 որոշմամբ որոշել է. «Հաստատել Սեմյոնովկա համայնքի 2013թ. բյուջեի կատարման հաշվետվությունը», սակայն թվային տվյալներ չկան:

- **Դպրաբակ** համայնքի ավագանու 2012թ. № 12 որոշման, նրանում նշված համայնքի ղեկավարի որոշման ամսաթվերը բացակայում են, չեն նշվել նաև, թե որոնք են համայնքի ղեկավարի թիվ 7 որոշման կատարված պահանջները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐԱԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ h 12

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 7 ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ Օրենքի 16-րդ հոդվածի 7 – րդ կետի դրույթներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1. Համայնքի ղեկավարի ընդունած թիվ 7 որոշման պահանջները համարել կատարված, և կատարված աշխատանքները գնահատել դրական:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ 4 դեմ 0 ձեռնպահ 0

Ավագանու անդամներ Ա. Ղարայան
Մ. Խորդկարյան
Հ. Բալյան
Ա. Նազլուխանյան

Համայնքի ղեկավար Հ. Վ. Նազլուխանյան
Քարտուղար Ն. Ն. Նազլուխանյան

- Սեփական եկամուտների հավաքագրման նպատակով ընդունված նմանատիպ որոշումները բավական հաճախ են հանդիպում (տե՛ս նաև Կալավան համայնքի ավագանու 2011թ. № 04/9 և № 05/10, Ներքին Շորժա համայնքի 2012թ. № 1 որոշումները և այլն):

« 28»_06_ 2011 թ.

Քաղվածք

ՀՀ Գեղարքունիքի մարզի Բերդկունք համայնքի
ավագանու N 5 նիստի

Որոշում 5

Համայնքի սեփական եկամուտների կիսամյակային հաշվետվությունը սեփական եկամուտների հավաքագրման մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդված 3-րդ կետի դրույթներով համայնքի ավագանին որոշեց՝

1.Հավանություն տալ կատարողականին և միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների 100% հավաքագրմանը:

Բերդկունք համայնքի ղեկավար Բ. Դադիկյան

- Եվ ամենարտառոցը՝ **Նորակերտ** համայնքի ավագանու 20.07.2012թ. որոշումը ՀՀ կառավարության որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին...

Արձանագրություն թիվ 5

20.07.2012թ. գ. Նորակերտ

Կայացավ ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնքի ավագանու նիստ

Նիստին ներկա է 5-ական ավագանու անդամներ՝ Գ. Մարգսյանը, Լ. Սիրանոսյանը, Լ. Հարությունյանը, Կ. Ղուկասյանը, Հ. Հակոբյանը:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Գ. Մարգսյանը.

քարտուղար Ա. Եղանյան

Օրակարգ.

1. Համայնքի գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերը սահմանելու կարգը հաստատելու մասին:
(զեկ. Գ. Մարգսյան. հանձ. զեկուցող)

2. ՀՀ կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
(զեկ. Գ. Մարգսյան. հանձ. զեկուցող)

Լսեցին-2. ՀՀ կառավարության 1998 թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին Գ. Մարգսյանի զեկույցը.

Հայտնի է, որ ՀՀ կառավարությունը 2012 թ. հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ սահմանել է գույքահարկի և հողի հարկի դրույքաչափեր, սակայն համայնքի ավագանին

Որոշեց- 1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի դրույքաչափերը սահմանելու կարգը հաստատելու մասին» N 300 որոշումը:

ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՏԻՄ-ԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքի՝ 03.03.2014թ. դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի 13 համայնքապետարաններ ունեն համացանցային կայքեր: Այդ տեղեկատվությունը աղյուսակի տեսքով տեղադրված է ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքի «Տեղական ինքնակառավարման համակարգ» բաժնի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը համայնքապետարաններում» ենթաբաժնում՝ հղում http://www.mta.gov.am/files/docs/575.pdf: Ստորև ներկայացվում են Գեղարքունիքի մարզի համայնքապետարանների համացանցային կայքերի հասցեները:

№	Համայնքի անվանումը	Համայնքապետարանի կայքի հասցեն ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքի
1	ք. Սևան	http://sevan.city.am
2	ք. Գավառ	http://www.gavariqaghaqapetaran.am
3	ք.Մարտունի	http://martunihamaynq.am
4	ք. Ճամբարակ	http://chambarak.am
5	գ. Նորատուս	http://noratus.am/
6	գ. Երանոս	http://yeranos.am
7	գ. Զովաբեր	http://zovaber.am
8	գ. Ծովագյուղ	http://tsovagyugh.am
9	գ. Վարդենիկ	http://vardenik.am
10	գ. Վարսեր	http://varser.am
11	գ. Դդմաշեն	http://ddmashen.am
12	գ. Վաղաշեն	http://vaghashen.am
13	գ. Լճաշեն	http://lchashen.am

Ուսումնասիրելով վերոհիշյալ աղյուսակում նշված 13 կայքերի առկայությունը՝ պարզվեց, որ միայն Գավառի և Վարդենիկ համայնքապետարաններն ունեն համացանցային կայքեր, որոնք են՝ www.gavariqaghaqapetaran.am և http://vardenik.am: **Աղյուսակում նշված մնացած 11 համայնքապետարանների կայքերի հասցեները համընկնում են Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ)՝ նույն համայնքապետարանների կայքերի հասցեներին:**

Ելնելով այդ հանգամանքից՝ անդրադառնում ենք Գավառի և Վարդենիկի համայնքապետարանների համացանցային կայքերին և ներկայացնում նշված ՏԻՄ-երի կողմից իրենց պաշտոնական կայքերում 30.04.2014թ. դրությամբ իրավական ակտերի մատչելիության վիճակը:

Գավառի քաղաքապետարանի համացանցային կայքում (www.gavariqaghaqapetaran.am) առկա է «ՏԻՄ» բաժինը, որն ունի «Քաղաքապետարան» և «Ավագանի» ենթաբաժինները: «Ավագանի» բաժնում 30.04.2014թ. դրությամբ տեղադրված են համայնքի ավագանու 2012թվականի 1-3-րդ նիստերի ընթացքում ընդունված թվով 13 որոշումներ, 2013թ. ավագանու 1-ին նիստին ընդունված 1-15 համարակալմամբ և 20.01.2014թ. 1-ին նիստին ընդունված 1-9 համարակալմամբ որոշումները, որոնց հավելվածները տեղադրված չեն: Այսպես, ավագանու թիվ 1 որոշմամբ հաստատվել է «Տեղական ինքնակառավարմանը Գավառ համայնքի

բնակիչների մասնակցության կարգը», թիվ 6 որոշմամբ՝ «Քաղաքապետարանի աշխատակազմի գործավարության կարգը», թիվ 7 որոշմամբ՝ «Համայնքի ավագանու և քաղաքապետի կողմից քաղաքացիների ընդունելությունների կազմակերպման կարգը», սակայն նշված կարգերի հավելվածները կայքում տեղադրված չեն: Մինչդեռ այս կարգերը, մասնավորապես «Տեղական ինքնակառավարմանը Գավառ համայնքի բնակիչների մասնակցության կարգը» և «Համայնքի ավագանու և քաղաքապետի կողմից քաղաքացիների ընդունելությունների կազմակերպման կարգը» վերաբերում են համայնքի բոլոր բնակիչներին և դրանց մատչելիության ապահովումը տեղական ինքնակառավարման իրականացման կարևոր երաշխիքն է:

Կայքում քաղաքապետի որոշումների տեղադրման աշխատանքները իրականացվել են՝ 27.03.2014թ.-ից սկսած: Գավառի քաղաքապետարանի համացանցային կայքի «Տեղեկատու» բաժնի «Քաղաքապետի որոշումներ» ենթաբաժնում տեղադրված են քաղաքապետի 2013թ. 237-270 համարակալմամբ ընդհանուր թվով 43 որոշումներ և 2014թ. 1-66 համարակալմամբ որոշումները: 02.04.2014թ. ընդունված քաղաքապետի № 66-Ա որոշումից հետո կայքում որոշումներ չեն տեղադրվել:

Վարդենիկի գյուղապետարանի համացանցային կայքում (http://vardenik.am) առկա է «Ավագանու նիստեր» բաժինը, որն ունի «Համայնքի ավագանու կողմից հաստատված բյուջե», «Գրաֆիկական պատկերներ», «Հաշվետվություններ բյուջեի կատարման վերաբերյալ», «Ավագանու նիստեր 2013» ենթաբաժինները, սակայն այս ենթաբաժիններում որևէ գրանցում առկա չէ: Կայքն ունի նաև «Քառամյա ծրագիր» բաժինը, որտեղ ծրագիր նույնպես զետեղված չէ: Կայքը չունի ՏԻՄ-ի իրավական ակտերին վերաբերող բաժին:

Ամփոփելով՝ նշենք, որ դիտարկված Գավառի և Վարդենիկի համայնքային կայքերում էլ իրավական ակտերի մատչելիությունը ապահովված չէ:

Վարդենիկի գյուղապետարանի համացանցային կայքը չի պարունակում անհրաժեշտ տեղեկատվություն և չի համապատասխանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Գավառի քաղաքապետարանը գործարկում է 2 համայնքային պաշտոնական կայքեր, քանի որ իրավական ակտերը տեղադրվում են նաև ՀԿՏՀ համայնքային կայքում: Սակայն, Գավառի 2 համայնքային պաշտոնական կայքերում էլ իրավական ակտերը տեղադրված են ոչ ամբողջական:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ՀԿՏՀ) ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՏԻՄ-ԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքի՝ 14.04.2014թ. դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի 52 համայնքներ ունեն Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ): Վերոհիշյալ տեղեկատվությունը տեղադրված է կայքի «Տեղական ինքնակառավարման համակարգ» բաժնի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը համայնքապետարաններում» ենթաբաժնում՝

- http://www.mta.gov.am/files/docs/574.pdf հղումով փաստաթղթում ներկայացված է ամփոփ տեղեկատվություն ՀՀ համայնքապետարաններում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության վերաբերյալ, նշված են միայն քանակական տվյալներ.
- http://www.mta.gov.am/files/docs/472.pdf հղումով փաստաթղթում ներկայացված են ՀԿՏՀ ունեցող համայնքների անունները:

Ուսումնասիրելով «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի http://infosys.am/ պաշտոնական կայքի «Համայնքային կայքեր» բաժինը և համադրելով ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքի տվյալների հետ՝ պարզվեց, որ **14.04.2014թ. դրությամբ համակարգում գրանցված են Գեղարքունիքի մարզի ոչ թե 52, այլ 30 համայնքներ**, որից կայքի այցելուների համար 30.04.2014թ. դրությամբ **հասանելի են միայն 26 համայնքային կայքերը**:

Ստորև ներկայացվում են 30.04.2014թ. դրությամբ ՀԿՏՀ ունեցող ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների ցանկը և նրանց կայքերի հասցեներն ըստ մոնիտորինգի արդյունքների:

№	Համայնքը	ՀԿՏՀ-ի հասցեն
1	ք. Գավառ	http://130.193.121.177/Pages/Home/Default.aspx
2	ք. Ճամբարակ	http://chambarak.am/Pages/Home/Default.aspx
3	ք. Մարտունի	http://martunihamaynq.am/Pages/Home/Default.aspx
4	ք. Սևան	http://sevancity.am/Pages/Home/Default.aspx
5	ք. Վարդենիս	http://195.250.86.20/Pages/Home/Default.aspx
6	Գեղամասար	**չի բացվում**
7	Գեղամավան	http://46.19.101.29/Pages/Home/Default.aspx
8	Դդմաշեն	http://ddmashen.am/Pages/Home/Default.aspx
9	Երանոս	http://yeranos.am/Pages/Home/Default.aspx
10	Զովաբեր	http://zovaber.am/Pages/Home/Default.aspx
11	Թթուջուր	http://46.130.52.157/Pages/Home/Default.aspx
12	Լանջաղբյուր	http://46.130.53.181/Pages/Home/Default.aspx
13	Լիճք	http://46.130.48.89/Pages/Home/Default.aspx
14	Լճաշեն	http://lchashen.am/Pages/Home/Default.aspx
15	Լուսակունք	**չի բացվում**
16	Խաչաղբյուր	**չի բացվում**

№	Համայնքը	ՀԿՏՀ-ի հասցեն
17	Ծաղկունք	http://46.130.50.32/Pages/Home/Default.aspx
18	Ծովագյուղ	http://46.130.54.116/Pages/Home/Default.aspx
19	Ծովազարդ	http://46.130.49.153/Pages/Home/Default.aspx
20	Ծովինար	**չի բացում**
21	Կարմիրգյուղ	http://46.130.50.190/Pages/Home/Default.aspx
22	Մադինա	http://195.250.86.42/Pages/Home/Default.aspx
23	Նորակերտ	http://195.250.86.49/Pages/DocFlow/Default.aspx?nt=1&dt=Message
24	Նորատուս	http://noratus.am/Pages/Home/Default.aspx
25	Սարուխան	http://130.193.121.178/Pages/Home/Default.aspx
26	Վահան	http://vahanvillage.am/Pages/Home/Default.aspx
27	Վաղաշեն	http://vaghashen.am/Pages/Home/Default.aspx
28	Վարդաձոր	http://195.250.86.13/Pages/Home/Default.aspx
29	Վարդենիկ	http://87.241.168.230/Pages/Home/Default.aspx
30	Վարսեր	http://varser.am/Pages/Home/Default.aspx

Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են ՀՀ Գեղարքունիքի մարզի՝ ՀԿՏՀ ունեցող համայնքային կայքերում ՏԻՄ-երի իրավական ակտերի քանակական տվյալները առ 30.04.2014թ. դրությամբ՝ սկսած 2009 թվականից:

№	Համայնքը	Ավագանու որոշումների քանակը							Համայնքի ղեկավարի որոշումների քանակը						
		2009	2010	2011	2012	2013	2014	Ընդամենը	2009	2010	2011	2012	2013	2014	Ընդամենը
1	Գավառ	-	-	-	-	-	-	**0**	-	-	-	-	-	106	**106**
2	Ճամբարակ	-	34	20	26	32	12	**124**	-	41	57	64	57	25	**244**
3	Մարտունի	-	-	-	-	2	-	**2**	14	42	45	37	37	7	**182**
4	Սևան	76	52	48	65	64	-	**305**	-	-	-	-	-	-	
5	Վարդենիս	-	-	22	95	115	39	**271**	-	-	26	222	249	143	**640**
6	Գեղամասար	Կայքը չի բացվում:													
7	Գեղամավան	-	-	-	-	8	5	**13**	-	-	-	-	2	4	**6**
8	Դդմաշեն	30	25	30	24	23	13	**145**	36	26	109	65	83	22	**341**
9	Երանոս	-	53	42	34	52	23	**223**	-	36	72	51	41	20	**201**
10	Զովաբեր	-	-	-	-	41	18	**59**	-	-	-	-	57	24	**81**
11	Թթուջուր	-	-	-	-	-	5	**5**	-	-	-	-	7	3	**10**
12	Լանջաղբյուր	-	-	-	-	4	1	**5**	-	-	-	-	-	-	**0**
13	Լիճք	-	-	-	-	-	-	**0**	-	-	-	-	-	-	**0**
14	Լճաշեն	-	-	-	-	57	26	**83**	-	-	-	-	131	51	**182**
15	Լուսակունք	Կայքը չի բացվում:													
16	Խաչաղբյուր	Կայքը չի բացվում:													
17	Ծաղկունք	-	-	-	-	15	8	**23**	-	-	-	-	12	14	**26**
18	Ծովագյուղ	-	-	-	-	-	-	**0**	-	-	-	-	-	-	**0**
19	Ծովազարդ	-	-	-	-	-	-	**0**	-	-	-	-	-	-	**0**
20	Ծովինար	Կայքը չի բացվում:													
21	Կարմիրգյուղ	-	-	2	26	26	9	**63**	-	-	-	22	49	11	**82**
22	Մադինա	-	-	-	-	1	7	**8**	-	-	-	-	-	-	**0**
23	Նորակերտ	-	-	-	-	-	-	**0**	-	-	-	-	-	-	**0**
24	Նորատուս	-	-	21	14	35	14	**84**	-	-	8	-	12	0	**20**
25	Սարուխան	45	30	25	25	34	14	**170**	51	124	86	51	51	23	**386**
26	Վահան	-	-	-	-	11	13	**24**	-	-	-	1	25	14	**39**
27	Վաղաշեն	-	-	-	6	62	11	**79**	-	-	-	57	63	19	**139**
28	Վարդաձոր	-	-	-	-	-	-	**0**	-	-	-	-	-	-	**0**
29	Վարդենիկ	-	-	-	-	-	-	**0**	-	-	-	-	-	-	**0**
30	Վարսեր	-	-	-	-	-	-	**0**	-	-	-	-	-	-	**0**

Աղյուսակում նշված կայքերից **դիտարկման ողջ ժամանակահատվածում չեն բացվել Գեղամասար, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովինար գյուղական համայնքային կայքերը:**

Լիճք, Ծովագյուղ, Ծովազարդ, Նորակերտ, Վարդաձոր, Վարդենիկ և Վարսեր գյուղական համայնքային կայքերը հազվադեպ են բացվում: Ներկայացնենք թվարկված 7 համայնքային կայքերում առկա թերացումները:

- Նշված **7 համայնքային կայքերի՝ հասանելի լինելու ընթացքում համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումներ գրանցված չեն եղել** («ՏԻՄ» բաժնի համապատասխան ենթաբաժիններ):
- **Վարդաձոր և Նորակերտ** գյուղական համայնքային կայքերի ոչ միայն գլխավոր էջերում, այլ նաև կայքերի մյուս բաժիններում ընդհանրապես առկա չեն այդ ՏԻՄ-երի գործունեության մասին տեղեկություններ, բացառությամբ Նորակերտ համայնքի ղեկավարի մասին անհատական տեղեկությունների՝ անուն, ազգանուն, ծննդյան ամսաթիվ, լիազորությունների սկիզբ:
- **Վարսեր** գյուղական համայնքային կայքի գլխավոր էջում տեղադրված են համայնքային կյանքին վերաբերող որոշ նյութեր, սակայն «ՏԻՄ» բաժինն ակտիվացնելիս կրկին բացվում է գլխավոր էջը: Այսպիսով, ՏԻՄ իրավական ակտերը հասանելի չեն, իսկ «Համայնքային բյուջե» բաժնում տեղեկություններ տեղադրված չեն:
- **Ծովազարդ** գյուղական համայնքային կայքի գլխավոր էջում առկա չեն համայնքային կյանքին վերաբերող նյութեր: «Ավագանու նիստեր» ենթաբաժնում առկա են միայն ավագանու՝ 30.01.2014թ. առաջին նիստի անցկացման մասին տեղեկություններ, «Կից փաստաթղթեր» տողում տեղադրված են նիստում ընդունված 1-9 համարակալմամբ որոշումների քաղվածքները և որոշումների հավելվածները: Իսկ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումներ բաժնում գրանցումներ չկան: «Համայնքի բյուջե» բաժնում տեղադրված են տեղեկություններ բյուջեի կատարողականների մասին:
- **Վարդենիկ** գյուղական համայնքային կայքն անհասանելի է եղել դիտարկման ողջ ընթացքում, հետևապես հնարավոր չի եղել այն դիտարկել:

Համայնքային կայքերում հիմնականում առկա են ՏԻՄ իրավական ակտերի մատչելիության հետ կապված հետևյալ ընդհանրական բացթողումները:

- Համայնքային կայքերը բացվում են դանդաղ: Հազվադեպ չեն այն դեպքերը, երբ համայնքային էջերը ժամերով, անգամ օրերով չեն բացվում:
- Կայքերում տեքստային տառաչափերը փոքր են:
- Էական թերացում է համայնքային կայքերում **ավագանու նիստերի մասին ոչ պատշաճ իրազեկումը**: Ընդգծենք, որ ոչ բոլոր համայնքներն են կայքում տեղեկություն տեղադրում ավագանու նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ և օրակարգի նախագիծը:
- Բացառությունների պարագայում ավագանու նիստի մասին իրազեկումները հիմնականում տեղադրվում են կայքի «Իրադարձություններ» բաժնում, մինչդեռ կայքի այցելուների համար դժվար է գտնել առաջիկայում կայանալիք նիստի վերաբերյալ իրազեկումը: Նկատենք, որ տվյալ էջում բացակայում են ավագանու նիստերի տեղեկացումների տեղադրման ամսաթվերը (տե՛ս նկարը):



- Համայնքային կայքերում **տեղադրված չէ համայնքի ավագանու անդամի և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը**:
- «Համայնքի ավագանի» բաժնի «Ավագանու կանոնակարգ» ենթաբաժնում հիմնականում **տեղադրված չեն համայնքների ավագանու կանոնակարգերը**, բացառությամբ 2-3 համայնքների:
- «Տուրքեր և վճարներ» բաժնում հիմնականում **տեղադրված չեն տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի և վճարների յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների մասին տեղեկություններ**:
- Ամենամտահոգիչ խնդիրներից է այն, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-ին հոդվածի և ՀՀ կառավարության «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» 25.03.2010թ. № 296-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ **համայքային կայքերում տեղադրված չեն նորմատիվ իրավական ակտի նախագծերի հանրային քննարկումների հրավերներ**:
- Առանձնակի ուշադրության է արժանի Սարուխան գյուղական համայնքի ավագանու որոշումների տեղադրման ձևը, որը տարբերվում է ՀԿՏՀ համայնքային կայքերում ավագանու որոշումների տեղադրման ընդհանուր միասնական ձևից: Բացակայում է ավագանու որոշումների գրանցումների ընդհանուր քանակը, տեղադրված որոշումները խմբավորված են ըստ համարների:

Ամփոփելով ՀԿՏՀ ունեցող և փաստացի գործարկվող ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքային կայքերի ուսումնասիրությունը իրավական ակտերի մատչելիության առումով՝ կարող ենք նշել.

- **առավել հագեցած և ամբողջական են ընդամենը 5 համայնքային կայքեր՝ Ճամբարակ, Վարդենիս, Դդմաշեն, Երանոս, Սարուխան,**
- **վերջին տարիների կտրվածքով իրավական ակտերի մատչելիությունն ապահովում են ևս 5 համայնքներ՝ Զովաբեր, Լճաշեն, Կարմիրգյուղ, Վաղաշեն,Վահան,**
- **Սևան քաղաքի** համայնքային կայքում առկա են միայն ավագանու որոշումներ 2013 թ. ներառյալ,
- **Մարտունի քաղաքի** համայնքային կայքում տեղադրված են համայնքի ղեկավարի որոշումներ և ընդամենը 2 ավագանու որոշումներ՝ ընդունված 2013թ. ընթացքում,
- **Գավառ քաղաքի** համայնքային կայքում տեղադրված են միայն համայնքի ղեկավարի որոշումներ՝ սկսած 2014թ.-ից,
- **Նորատուս գյուղական համայնքը** հիմնականում տեղադրել է ավագանու որոշումներ և համայնքի ղեկավարի ընդամենը 20 որոշումներ՝ ընդունված 2011 և 2013 թվականների ընթացքում:

ՀՀ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջով՝ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (36-րդ հոդվածը փոփ. 19.03.12 ՀՕ-155-Ն):

Օրենսդրական այս պահանջի կատարման առնչությամբ մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վերը նշված կայքում **ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների կողմից 2013թ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններ չեն հրապարակվել**:

Քանի որ կայքի վարումը, տեխնիկական սպասարկումը, կայքում տեղեկատվության զետեղման հետ կապված հարցերի քննարկումը և կայքի հետ կապված այլ հարցերի լուծումը իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը, մեր կողմից 25.04.2014թ.-ին գործակալությանը տեղեկություն ստանալու հարցում հղվեց՝ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում առ 25.04.2014թ. դրությամբ Գեղարքունիքի մարզի համայնքների 2013թ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններ հրապարակման մասին պաշտոնական պատասխան ստանալու համար: **08.05.2014թ. պատասխան գրությամբ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը տեղեկացրել է. «ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում Գեղարքունիքի մարզի համայնքների բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններն առ այսօր չեն հրապարակվել»:**

Ավելին, ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային http://www.azdarar.am կայքում կատարված որոնումներով պարզվեց, որ 2013թ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվություն չի հրապարակվել հանրապետության և ոչ մի համայնքի կողմից:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի մատչելիության ապահովման և արդյունավետության զարգացմանն են միտված 2 իրավական ակտեր՝

- ՀՀ կառավարության 26.12.2013թ. հաստատած «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» № 1521-Ն որոշումը, որն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից,
- ՀՀ կառավարության 19.03.2014թ. № 11 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգը» և «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցը»:

Վերը նշված № 1521-Ն որոշման պահանջով՝ պետական մարմինները պարտավոր են ունենալ պաշտոնական կայք՝ իրենց գործունեության մասին տեղեկատվություն տրամադրելու համար: Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հանրապետական գործադիր մարմինները իրենց պաշտոնական կայքերը վեցամսյա ժամկետում պետք է համապատասխանեցնեն սույն որոշման պահանջներին:

Սակայն տեղական ինքնակառավարման մարմինների համար որոշմամբ որևէ պահանջ չի սահմանվում: Նրանց ընդամենն առաջարկվում է իրենց պաշտոնական կայքերը համապատասխանեցնել սույն որոշման պահանջներին: Այսինքն՝ ՏԻՄ-երը կարող են իրենց հայեցողությամբ կատարել կամ չկատարել սույն որոշման պահանջները: Արդյունքում, որոշման պահանջների կատարմանը հետամուտ կլինեն այն ՏԻՄ-երը, որոնք արդեն իսկ առաջնորդվում են իրենց գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարելավելու սկզբունքով:

Ներկա իրավիճակում ՏԻՄ-երի կողմից համայնքային պաշտոնական կայքեր ունենալը, դրանց պատշաճ գործարկումը և օրենսդրական նոր պահանջների կատարումը պահանջում է տևական աշխատանք, ռեսուրսների մոբիլիզացում, տեղեկատվության մատչելիության մշտական զարգացում, ինչը կարող է պատճառ դառնալ, որ բազմաթիվ ՏԻՄ-եր խուսափեն համայնքային կայքեր ունենալուց: Բացի այդ, մեր իրականության պայմաններում իրատեսական չի կարող լինել այն պնդումը, թե բոլոր ՏԻՄ-երը պարտավոր են ունենալ պաշտոնական ինտերնետային կայքեր: Ու թեև մեր օրենսդրությամբ չկա տարբերակված մոտեցում քաղաքային և գյուղական, փոքր, միջին և մեծ համայնքների առնչությամբ, այդուհանդերձ, հասարակական կյանքի բնականոն ընթացքը ցույց է տալիս, որ հատկապես գյուղական փոքր համայնքները չունեն պաշտոնական ինտերնետային կայքեր ստեղծելու և վարելու հնարավորություններ՝ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ տարաբնույթ պատճառներով:

Ներկա իրավիճակում, սակայն, **սակավ հնարավորություններ ունեցող համայնքները մարզպետարանների կայքերի միջոցով հնարավորություն ունեն ապահովել իրենց կողմից**

ընդունված իրավական ակտերի մատչելիությունը: Թեև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջով միայն ավագանու որոշումները պետք է առաքվեն մարզպետարաներ, որոնց տեղադրումը մարզպետարանների պաշտոնական կայքերում ևս կանոնակարգված է, սակայն մարզպետարանների պաշտոնական կայքերում համայնքների համար ստեղծված ենթաբաժինները բավականաչափ հնարավորություններ են տալիս ՏԻՄ-երին ավելի ակտիվ և արդյուավետ օգտվել մարզպետարանների կայքերից՝ հետամուտ լինելով իրենց գործունեության հրապարակայնության և թափանցիկության սկզբունքի կենսագործմանը:

Օրեցօր ավելի ու ավելի պահանջված է դառնում ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացումը: Ակներև է, որ այս առումով իրականացվող գործընթացները պետք է հանգեցնեն նրան, **<u>որ տեղական ինքնակառավարման համակարգի օրենսդրությունը պարտադրի ՏԻՄ–երին ունենալ և վարել պաշտոնական կայքեր:</u>** Այս գործընթացներում կարևոր է համայնքների խոշորացման իրականացումը, որի արդյունավետությունից է կախված հետայդու արդեն հնարավորություններ ունեցող ՏԻՄ-երի կողմից համայնքային պաշտոնական կայքերի ստեղծման և վարման ընթացքը:

Առանց ՏԻՄ-երի կողմից պաշտոնական ինտերնետային կայք ունենալու և վարելու օրենսդրական պարտադիր նորմի սահմանման՝ ՏԻՄ-երի ընդունած իրավական ակտերի ինտերնետային մատչելիությունը չի կարող իրականացվել արդյունավետ և համապարփակ: Չեն կարող արդիականորեն կենսագործվել համայնքի անդամների առջև հաշվետու լինելու, հրապարակայնության և թափանցիկության, տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության տեղական ինքնակառավարման սկզբունքները:

ՀՀ բոլոր ՏԻՄ-երի կողմից ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության չհրապարակման խիստ մտահոգիչ փաստը, ցավոք, խոսում է ՏԻՄ-երի կողմից հրապարակայնության և թափանցիկության ապահովման սկզբունքի, օրենքի պահանջի անտեսման մասին: Իսկ եթե օրենսդրական պահանջը բացակայում է, ապա այս դեպքում ի՞նչ երաշխիք ունենք, որ ՏԻՄ-երը պատասխանատվության զգացումով պետք է առաջնորդվեն՝ նախ ստեղծելով, ապա նվազագույն պահանջների պահպանմամբ վարելով համայնքային պաշտոնական կայքեր:

Հետևապես տեղական ինքակառավարման ոլորտի պատասխանատու գործադիր մարմինները պետք է հետևողականորեն աշխատեն ՏԻՄ-երի կողմից պաշտոնական ինտերնետային կայքեր ունենալու և վարելու պահանջը պարտադիր դարձնելու ուղղությամբ՝ վերը նշված իրավական ակտերի պահանջների կատարմամբ ստեղծելով նախադրյալներ և երաշխիքներ: Էական նախապայման է նաև առկա վերահսկման հնարավորությունների կիրարկումը և վերահսկման նոր մեխանիզմների ներդրումը:

Մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ պետական քաղաքականության և տարբեր կառույցների հետևողական աշխատանքի շնորհիվ ՏԻՄ-երի իրավական ակտերի ինտերնետային մատչելիության և թափանցիկության ապահովման ոլորտում վերջին տարիներին նկատելի է էական առաջընթաց: Սույն հետազոտությամբ վերհանված բացթողումների ու խնդիրների շտկումը էլ ավելի կնպաստի այդ առաջընթացին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

№	Առաջարկություն	Ու՞մ է ուղղված:
1.	Աջակցել ՏԻՄ-երին ՀԿՏՀ ունենալու գործընթացում:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
2.	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլոր համայնքներն ունեն մարդկային և տեխնիկական ռեսուրսներ ՀԿՏՀ վարելու համար՝ առավել ուշադրություն դարձնել մարզպետարանների պաշտոնական ինտերնետային կայքերում ՏԻՄ-երի իրավական ակտերի տեղադրման գործընթացին:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
3.	Պարբերաբար մեթոդական և խորհրդատվական աջակցություն տրամադրել ՏԻՄ-երին՝ իրավական ակտերի ընդունման գործընթացը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու համար:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
4.	Հետևողական լինել, որպեսզի ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և ՀԿՏՀ-ի համայնքային պաշտոնական կայքերում ՏԻՄ-երի իրավական ակտերը տեղադրվեն ամբողջական՝ կից հավելվածներով:	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ՏԻՄ-եր
5.	Ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում մարզի՝ համայնքների ավագանիների բոլոր որոշումների ժամանակին տեղադրումը:	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ՏԻՄ-եր
6.	Վերահսկել, որպեսզի ՀԿՏՀ-ի համայնքային պաշտոնական կայքերն ամբողջությամբ պարունակեն և պատշաճ կերպով տրամադրեն օրենսդրությամբ նախատեսված ամբողջ տեղեկատվությունը ՏԻՄ-երի գործունեության, ընդունված որոշումների, համայնքի զարգացման ծրագրի բյուջեի կառավարման գործընթացների մասին:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
7.	Ապահովել ՀԿՏՀ-ի համայնքային կայքերում յուրաքանչյուր տեղեկատվության տեղադրման և փոփոխման ամսաթիվը, որպեսզի օգտվողները կարողանան գնահատել ներկայացրած տեղեկատվության արդիականությունը:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
8.	ՀԿՏՀ-ի համայնքային կայքերում ավագանու նիստի ժամանակի, վայրի իրազեկումը և նիստի օրակարգի նախագիծը տեղադրել Հայտարարություններ» բաժնում՝ ավագանու նիստից առնվազն 7 օր առաջ:	ՏԻՄ-եր
9.	ՀԿՏՀ-ի համայնքային կայքերի համապատասխան բաժիններում պարտադիր տեղադրել ավագանու որոշման նախագծերը, դրանց կից փաստաթղթերը, ավագանու կանոնակարգը, քառամյա զարգացման ծրագիրը, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:	ՏԻՄ-եր

10.	Հետևողական լինել համայնքային պաշտոնական կայքերը ՀՀ կառավարության 26.12.2013թ. «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» № 1521-Ն որոշման պահանջներին համապատասխանեցնելու հարցում:	ՏԻՄ-եր
11.	«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջին համապատասխան՝ հրապարակել համայնքների 2013թ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները http://www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:	ՏԻՄ-եր
12.	Ներդնել մեխանիզմներ համայնքների բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները http://www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակման գործընթացը վերահսկելու համար:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
13.	Ապահովել համայքային կայքերում նորմատիվ իրավական ակտի նախագծերի հանրային քննարկումների հրավերների տեղադրումը՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-ին հոդվածի և ՀՀ կառավարության «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» 25.03.2010թ. № 296-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՏԻՄ-եր
14.	Իրավական ակտերի նախագծերը մշակել ՀՀ կառավարության 2011 թ. հոկտեմբերի 6-ի նիստի № 39 արձանագրային որոշման «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող փաստաթղթերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույց» հավելվածի և ՀՀ համայնքների ավագանիներին ուղղված մեթոդական նամակի ցուցումներին համապատասխան:	ՏԻՄ-եր

ՀԱՎԵԼՎԱԾ № 1

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՀ սահմանադրություն

Հոդված 6, մաս 3

«Օրենքներն ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո: Այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո»:

Հոդված 27, մաս 2

«…Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

Հոդված 27.1

«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք ՀՕ-11-Ն

Հոդված 7, մաս 3-5

«2. Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը:

3. Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները.

1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները.

2) բյուջեն.

3) գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.

4) հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.

5) աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը.

6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը.

7) հասարակական միջոցառումների ծրագրերը.

8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը.

9) աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).

10) տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը.

11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը.

12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.

13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

5. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով»:

Հոդված 12

«Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը.

2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը.

3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն.

4) սահմանել իր կողմից բանավոր և (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը.

5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին»:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք ՀՕ-337

Հոդված 9

«Տեղական ինքնակառավարման սկզբունքներն են՝

8) համայնքի անդամների առջև հաշվետու լինելը.

9) տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը.

10) տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը:»:

(9-րդ հոդվածը լրաց. 19.06.13 ՀՕ-72-Ն)

Հոդված 12[1], մաս 1-2

«Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է տեղեկություն ավագանու նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ և օրակարգի նախագիծը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար:

Հնարավորության դեպքում այդ տեղեկությունը լրացուցիչ կերպով կարող է տարածվել զանգվածային լրատվության միջոցներով և ինտերնետային ցանցի միջոցով»:

(12[1]-րդ հոդվածը լրաց. 20.05.05 ՀՕ-135-Ն)

Հոդված 30, մաս 3, 8-րդ ենթակետ

«3. Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը՝ օրենքով, իրավական այլ ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, մասնավորապես՝

8) ապահովում է ավագանու որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.

(30-րդ հոդվածը խմբ. 30.09.08 ՀՕ-164-Ն, փոփ., լրաց. 08.12.11 ՀՕ-342-Ն, խմբ. 05.02.13 ՀՕ-6-Ն, լրաց. 19.06.13 ՀՕ-72-Ն)

Հոդված 33.1, մաս 1, 1-2-րդ ենթակետեր

«Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղականինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց (այդ թվում՝ տեղեկատվության և հեռահաղորդակցության).

2) ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է

համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար»:
(33.1-ին հոդվածը լրաց. 19.06.13 ՀՕ-72-Ն)

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք ՀՕ-320

Հոդված 27.1, մաս 4

«Հանրային քննարկումներն իրականացվում են նախագիծը մշակող մարմնի ինտերնետային կայքում նորմատիվ իրավական ակտի նախագիծը, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված այլ նյութերը հրապարակելու միջոցով, իսկ նախագիծ մշակող մարմնի նախաձեռնությամբ կարող են իրականացվել հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների, բաց լսումների, քննարկումների, հասարակական հարցումների, ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով:

Հանրային քննարկումների իրականացման ժամկետն առնվազն 15 օր է»:
(27.1-րդ հոդվածը լրաց. 02.12.08 ՀՕ-224-Ն, 18.05.10 ՀՕ-92-Ն)

Հոդված 56, մաս 1

«Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը ենթակա են պարտադիր պաշտոնական հրապարակման»:
(56-րդ հոդվածը խմբ. 26.12.08 ՀՕ-13-Ն)

Հոդված 67, մաս 1

«Իրավական ակտերի պաշտոնական կամ ոչ պաշտոնական հրատարակումն իրականացվում է այդ իրավական ակտերը կամ դրանց քաղվածքները թղթի վրա, էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա տպագրման կամ բազմացման, ինչպես նաև էլեկտրոնային կամ այլ ցանցերով դրանց տարածման միջոցով»:
(67-րդ հոդվածը լրաց. 07.04.09 ՀՕ-86-Ն)

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք ՀՕ-137

Հոդված 36, մաս 1, գ) ենթակետ

«Համայնքների բյուջեների հրապարակայնությունն ապահովելու համար՝

գ) համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում»:
(36-րդ հոդվածը փոփ. 19.03.12 ՀՕ-155-Ն)

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենք ՀՕ-172-Ն

(վերնագիրը խմբ. 19.03.12 ՀՕ-129-Ն)

Հոդված 3

1. Օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված այն դեպքերում, երբ նախատեսվում է հրապարակային ծանուցում՝ տեղեկատվությունը մամուլում հրապարակելու միջոցով, հրապարակային ծանուցումը պետք է տեղադրվի նաև կայքում:

Հոդված 5, մաս 2

«Օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով հրապարակային ծանուցման հրապարակման համար ժամկետ սահմանված լինելու դեպքում հրապարակային ծանուցման տեքստը պետք է ներկայացվի գործակալություն սահմանված ժամկետից առնվազն մեկ օր առաջ»:

Հոդված 6, մաս 1, 2

«1. Կայքը վարող անձը հրապարակային ծանուցումը ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքումհրապարակային ծանուցման տեքստը տեղադրում է կայքում:

2. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հրապարակվող հրապարակային ծանուցումը հրապարակվում է կայքում անմիջապես այն ստանալու պահից»:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք ՀՕ-185

Հոդված 20[1], մաս 1

«1. Համայնքի ղեկավարն ապահովում է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի և վճարների յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից սահմանված արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումը»:

(20[1]-րդ հոդվածը լրաց. 20.05.02 ՀՕ-348-Ն, 11.09.12 ՀՕ-178-Ն)

ՀՀ կառավարության 25.03.2010թ. № 296 -Ն որոշմամբ հաստատված «Նորմատիվ իրավական ակտերի նախագծի հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգ», մաս 7-9, 14

«7. Նախագիծը մշակող մարմինն իր ինտերնետային կայքում պետք է հրապարակի հանրային քննարկումների հրավեր, որը պետք է պարունակի քննարկումների իրականացման տեսակի, վայրի, ժամի, ժամկետների, քննարկման թեմայի, ինչպես նաև հանրային քննարկմանը մասնակցելու համար շահագրգիռ անձանց կողմից ներկայացվող դիմումների ընդունման վերջնաժամկետի (եթե, ըստ նախագիծը մշակող մարմնի, նման դիմում ներկայացնելն անհրաժեշտ է) մասին տեղեկություններ: Ընդ որում, դիմումների ընդունման վերջնաժամկետը չի կարող պակաս լինել, քան հանրային քննարկումների հրավերի հրապարակման պահից տասը օրը: Նախագիծը մշակող մարմինը հանրային քննարկումների հրավերը կարող է հրապարակել նաև զանգվածային լրատվամիջոցներով և ժամանակակից հեռահաղորդակցման այլ միջոցներով:

8. Հանրային քննարկումներ իրականացնելու նպատակով հանրային քննարկումների հրավերը հրապարակելու հետ մեկտեղ նախագիծ մշակող մարմնի ինտերնետային կայքում հրապարակվում է նորմատիվ իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև նախագիծ մշակող մարմնի հայեցողությամբ այլ նյութեր:

9. Հանրային քննարկումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք ինտերնետային կայքում հրապարակված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնվել ինտերնետային կայքում հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկվել համապատասխան էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացվել նախագիծ մշակող մարմին: [...]»:

«14. Հանրային քննարկումների ավարտից հետո 15-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված ամփոփաթերթը և նախագծի լրամշակված տարբերակը [...] պետք է տեղադրվի նախագիծ մշակող մարմնի ինտերնետային կայքում»:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 20.12.2011թ. № 07-Ն հրամանով հաստատված «ՀՀ մարզպետների կատարած աշխատանքների գնահատման չափորոշիչներ», մաս 3, կետ 5

«5) 0,4 միավոր է գնահատվում, եթե մարզպետարանի կայքում տեղադրվել են բոլոր համայնքների ավագանիների տվյալ ժամանակահատվածի ընդունած որոշումները, համայնքների մինչև 80 տոկոսի ավագանիների որոշումների տեղադրման դեպքում մարզպետը գնահատվում է 0,2 միավոր, 80-ից ցածրի դեպքում՝ 0 միավոր»: